

ԻՆՉՊԵՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԻ ՍՈՒՄԿԱՅԻԹԻ ԶԱՐԴԸ

Քալիֆորնիայ Ռ. Ա. Կ. ի շրջանակի օրկան «Նոր Օր»-ի աշխատակիցներին՝ պատմաբան Լեոն Դունամայեան Հայաստան այցելած էր Լեոնային Ղարաբաղի դէպքերու վաղորդայնին: Վերադարձին՝ երիտասարդ պատմաբանը հետեւեալ տեղեկութիւնները հայրաքաղաքէն Երեւան իմ քաղաքացիներին, Սումկայիթի ջարդին վերաբերեալ:

**

Ատրպէյճանի Սումկայիթ քաղաքը կը գտնուի Կասպից ծովուն եզերքը, մայրաքաղաք Պաքուէն թիւ 3 մը հեռախ: Վերջին երեք տասնամեակներուն կազմուած եւ արագօրէն զարգացող ճարտարարուեստական բանուորական նոր քաղաք մըն է, որ ներկայիս կը հաշուէ շուրջ 220,000 բնակչութիւն, որուն 17,000ը հայեր են, մեծամասնութեամբ զարարացիներ:



Սումկայիթի ջարդերէն ետք Մոսկուայի հայոց գերեզմանատան մէջ հաւաքուած հայերէն խումբ մը: Նկատելի է մէջտեղի ծերունիին ձեռքին՝ Ամենայն Հայոց Հայրապետին նկարը, իբրեւ արտասոյսաւորիւն երկիւղած սիրոյ եւ հաւատքի:

Իրենց ճակատադիրը որոշելու համար հանրաքուէ պահանջող զարարացիներու 100,000 ստորագրութեամբ դիմումնադիրը երբ Մոսկուայի կառավարութեան կողմէ մերժուեցաւ, համաժողովրդային խաղաղ ցոյցեր ծառայեցան Լեոնային Ղարաբաղի եւ Հայաստանի մէջ, 19 Փետրուարէն սկսեալ:

Լեոնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Խորհրդարանը, 20 Փետրուարին, պաշտօնապէս հաւորդեց Ատրպէյճանէն բաժնուելու ու մայր հայրենիքին միանալու իր որոշումը: Խ. Հայաստանի Կեդրոնական Կոմիտէն, իր կարգին, 26 Փետրուարին, պաշտօնական որոշումով զօրավիզ կանգնեցաւ Ղարաբաղին, կեդրոնական կառավարութենէն խնդրելով հարցին արագօրէն լուծուի:

Իբրեւ հակադրեցութիւն, Ատրպէյճանի մէջ ալ ցոյցեր տեղի ունեցած են: Ղարաբաղի սահմանային քաղաք Աղտամի մէջ, նախ թուրքերը ինքնադուրս փորձած են «կարգ ու կանոն» հաստատել, չըջանի հայերուն վրայ յարձակելով: Օրինակի համար, Ասկերանի մէջ, նման բախումի մը ընթացքին տեղական զօրքերը միջամտած են եւ երկու թուրքեր սպաննած:

Ատրպէյճանի Համայնավար կուսակցութեան Կ. քարտուղար Պակիրով 26 Փետրուարին հանդիպում ունեցած է Սումկայիթ քաղաքի ղեկավարներուն հետ: 28 Փետրուարին կողմակերպուած է հրապարակային միթինկոյ քաջալերուած սովետական կեդրոնական մամուլի՝ հայկական ցոյցերն ու պահանջատիրութիւնը դատաստարտող եւ ազգայնամոլ որակող կէցուածքէն: Երկրորդ պատճառը թուրքերու դրդութեան՝ Կ. Միութեան ղիսարոր դատախազի տեղակալ Կատուսելի յայտարարութիւնն է Պաքուի մէջ, ուր անիկա ակնարկած է Ասկերանի երկու թուրքերու սպանութեան, առանց յայտնելու դէպքին մանրամասնութիւնները:

Սոյն միթինկոյն խօսք առած է Սումկայիթի քաղաքական կոմիտէի Ա. քարտուղար Մուսլիմ Չատէ, որ խորամանկորար երկու օր առաջ արձակուրդ առած էր՝ խուսափելու համար սեղանի պատասխանատուութենէ: Հոն արտայայտուած են նաեւ իբրեւ թէ Ղարաբանէն փախուստ տուած ազերի թուրքեր, որոնք վկայած են թէ իրենց հայաստանարնակ ազգակիցները ջարդուած են յատկապէս Չանկեզուրի մէջ: Ելոյթներու աւարտին, ներկաները դրդուած, Մուսլիմ Չատէի ղիսարութեամբ, խուժած են փողոցները: Նոյն երեկոյեան սկսած է դազանային ջարդը հայերու, որոնց բնակարանային հասցէները նախապէս ձեռք բերուած էին տնային վարչութիւններէն: Քաղաքին հայրենակցութիւնը անակնկալի եկած, չէ կրցած պաշտպանել ինքզինք, մանաւանդ որ հաւաքարար չէր ազրեր, ու ցանցառ կերպով ցրուած էր այլազան թաղերու ու շէնքերու մէջ: Նոյնանրման յարձակումներ փորձուած են նաեւ Ատրպէյճանի սյլ քաղաքներուն, մասնաւորաբար Կիրովպատի մէջ, ուր հայեր յաջողած են ինքնապաշտպանութեան դիմել, որովհետեւ համայնքներով կամ համախմբուած կ'ապրէին:

29 Փետրուարին սովետական զօրքերը մտած են քաղաք, սակայն սկսած են միջամտել ու զսպումի դիմել միայն երկրորդ օրը, երբ արդէն նուազագոյն երեք հարիւր հայեր կոտարուած էին խժողութօրէն, ու բազմաթիւ ուրիշներ վիրաւորուած:

Ուրեմն, բանակը միջամտելէ ետք հաստատուած է կրակամար, 2օր: Քրայեւ ստանձնելով Սումկայիթի իշխանութիւնը: Իրենց պաշտօններէն հեռացուած են Մուսլիմ Չատէ, ինչպէս նաեւ քաղաքային սովետի նախագահը՝ Մահմէտով:

Բնականոն վիճակը վերահաստատուելով, ներկայիս կըրակամարը վերցուած է: Սակայն Սումկայիթ ամբողջովին պարպուած է իր հայրենակցութենէն: Հայաստան սպաստանած են 3000 հոգիներ, որոնց 1250ը, իրենց ազգականներուն քով, իսկ 1750 հոգին տեղաւորուած են պետութեան կողմէ արամադրուած այլազան զաղթակայաններու մէջ: Օրինակի համար, Արվերան աւանի (Հրազդանի շրջան) «Շուշան» ամառանոցին մէջ այժմ կը բնակին 305 հոգի: Սումկայիթի զաղթականներուն օգնութեան փութալու համար Հայաստանի մէջ ստեղծուած է յատուկ կոմիտէ, նախագահութեամբ Իկոր Մուրատեանի:

Սումկայիթի 17,000 հայերէն մնացեալները ապաստանած են Ղարաբաղ, ու ցրուած են նաեւ Վրաստան, Մոսկուա, ինչպէս նաեւ Կովկասի ու Խ. Միութեան այլազան շրջանները: